30.05.25 - 02.06.25
12:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական բազա

Ս.թ. մայիսի 30-ին ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական բազայում Ա շխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի նախաձեռնությամբ երկրորդ տարին անընդմեջ կմեկնարկի «ԳԵՈ-ներգրավում» ուսանողական ճամբարը:

Ծրագիրը նախատեսված է բակալավրիատի 1-4-րդ կուրսերի ուսանողների համար: Եռօրյա ծրագրի ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան.

- մասնակցելու մասնագիտական և երիտասարդության զարգացմանն ուղղված մի շարք դասընթացների, որոնք կներկայացնեն ոլորտի առաջատար մասնագետները,
- իրազեկվելու ֆակուլտետում ուսանողներին տրվող հնարավորությունների մասին,
- բարձրաձայնելու ֆակուլտետում առկա հիմնախնդիրները և քննարկելու դրանց հնարավոր լուծման ուղիները,
- ձեռք բերելու գաղափարակից ընկերներ:

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը «ԳԵՈ-ներգրավում» ուսանողական ծրագրի շրջանակում կիրականացնի դասընթացներ՝ հետևյալ թեմաներով.

- «Ինչպե՞ս կազմել գրագետ CV»,
- «Ինչպե՞ս ճիշտ ներկայանալ գործատուին»:

Ճամբարի օրակարգը՝ այստեղ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am